ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 5 » մարտի 2024 թվական N 78-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի 2024 թվականի փետրվարի 21-ի N 363-95/15 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2024 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Հանձնարարել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային տարահանման հանձնաժողովի նախագահին՝ հնարավոր հեղեղավտանգ ժամանակահատվածում պատրաստականության բերել մարզային տարահանման հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում հեղեղավտանգ տարածքներից անվտանգ տարածք բնակչության, կենդանիների, նյութական արժեքների տարահանման և տեղաբաշխման միջոցառումները կազմակերպելու համար.

2) Փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին՝

ա. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետի հետ համատեղ մշակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2024 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների ծրագիր և մինչև 2024 թվականի մարտի 10-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի հաստատմանը,

բ. հնարավոր հեղեղավտանգ ժամանակահատվածում համապատասխան ծառայությունների կողմից հաղորդվող ընթացիկ տեղեկատվությունն ամփոփել և պարբերաբար ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին,

գ. հեղեղումների դեպքում, տուժած տարածքներում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում գործող զանգվածային լրատվական միջոցներով պարբերաբար իրազեկել բնակչությանը սպառնացող վտանգների և ձեռնարկվելիք միջոցառումների մասին,

3) «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Ախուրյանի գետավազանի ջրաբանական կայանի պետին՝ ապահովել ջրաչափական դիտակետերից ստացված տեղեկատվության վերլուծումը և ժամանակին այն հաղորդել Փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչություն, ամեն օր՝ ժամը 08:00-ին և 20:00-ին, իսկ իրավիճակի վատթարացման դեպքում՝ անհապաղ.

4) «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Գյումրու, Արթիկի, Աշոցքի, Ամասիայի օդերևութաբանական կայանների պետերին՝ ապահովել օդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության վերլուծումը և ժամանակին այն հաղորդել Փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչություն, ամեն օր՝ ժամը 08:00-ին և 20:00-ին, իսկ իրավիճակի վատթարացման դեպքում՝ անհապաղ.

5) Ջրային կոմիտեի՝ Մանթաշի, Թավշուտի, Արփիի, Կառնուտի, Սառնաղբյուրի, Վարդաքարի ջրամբարների պատասխանատուներին և «Շիրակ» ջրօգտագործողների ընկերության գործադիր տնօրենին՝

ա. հեղեղավտանգ ժամանակահատվածում ուժեղացնել հսկողությունը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում գտնվող ջրամբարների և ջրանցքների հիդրոլոգիական ռեժիմների նկատմամբ և այդ մասին տրամադրել տեղեկատվություն Փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչություն, ամեն օր՝ ժամը 08:00-ին և 20:00-ին, իսկ իրավիճակի վատթարացման դեպքում՝ անհապաղ,

բ. նշված ժամանակահատվածում ջրամբարներից հարկադրված ջրթողման դեպքում նախօրոք տեղեկացնել Փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը,

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետին՝ հեղեղավտանգ ժամանակահատվածում պատրաստ վիճակի բերել բժշկական ծառայության ուժերն ու միջոցները, անհրաժեշտության դեպքում տուժածների բժշկական սպասարկումն իրականացնելու համար,

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետին՝

ա. ճշտել և պատրաստ վիճակի բերել մարզում առկա ինժեներական տեխնիկան, անհրաժեշտության դեպքում տուժած տարածքներում փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումն ապահովելու համար,

բ.նախապատրաստել համապատասխան քանակի տրանսպորտային միջոցներ, անհրաժեշտության դեպքում վտանգավոր տարածքներից դեպի անվտանգ տարածք մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների տեղափոխման և տեղաբաշխման նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) 2024 թվականի ընթացքում գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների

վերաբերյալ ընդունել համապատասխան որոշում, կազմել իրականացվելիք միջոցառումների պլան, ապահովել նախատեսված միջոցառումների ժամանակին կատարումը, ինչպես նաև այդ նպատակով նախատեսել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ,

2) պատրաստ վիճակի բերել համայնքներում առկա ազդարարման համակարգերը, արագ արձագանքման փրկարարական խմբերը, անհրաժեշտության դեպքում բնակչության ազդարարումը, փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներն օպերատիվ իրականացնելու համար,

3) կատարված աշխատանքների վերաբերյալ տրամադրել տեղեկատվություն Փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը՝ սկսած 2024 թվականի մարտի 10-ից, յուրաքանչյուր 10 օրը մեկ անգամ, իսկ հեղեղավտանգ ժամանակահատվածում՝ ամենօրյա պարբերականությամբ:

3.«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղի տնօրենին՝ հեղեղավտանգ ժամանակահատվածում համապատասխան պատրաստականության բերել կազմակերպության վթարավերականգնողական կազմավորումները, անհրաժեշտության դեպքում էլեկտրական ուղիների վթարային անջատումներ և վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար:

4.«Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Շիրակի գազամատակարարման և գազաֆիկացման մասնաճյուղի տնօրենին՝ հեղեղավտանգ ժամանակահատվածում համապատասխան պատրաստականության բերել կազմակերպության վթարավերականգնողական կազմավորումները, անհրաժեշտության դեպքում գազամատակարարման ցանցի վթարային անջատումներ և վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար:

5.«Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Հյուսիս» տարածաշրջանի տնօրինության «Շիրակ» տեղամասի պետին՝ հեղեղավտանգ ժամանակահատվածում համապատասխան պատրաստականության բերել կազմակերպության վթարավերականգնողական կազմավորումները, անհրաժեշտության դեպքում ջրամատակարարման վթարային անջատումներ և

ջրահեռացման ցանցի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար:

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետին՝ ապահովել գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելմանը, դրանց հետևանքների նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների լուսաբանումը մարզի զանգվածային լրատվության միջոցներով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքով:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ